ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2019

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ՈՐՈՇՄԱՄԲ ԱՐՁ. №1, ԿԱՅԱՑԱԾ 06.03.2019
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
______________ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գրանցված է
ՀՀ Արդարադատության նախարարությունում
հաշվառման համար՝ 211.220.00958

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Սույն կանոնադրությունը սահմանում է «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսի կազմակերպչական, տնտեսական, իրավական գործունեության հիմնադրույթները:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսի (այսուհետ՝ Գիտական հանդես) խմբագրության (այսուհետ՝ Խմբագրության) հիմնադիրն է ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հիմնադիր):

1.1. Գիտական հանդեսի հրատարակումը, որպես հիմնադրի գործունեություն, իրականացվում է ՀՀ կառավարության համապատասխան որոշումների համաձայն, ՀՀ գործող օրենսդրությամբ, հիմնադրի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.2. Խմբագրության հասցեն է՝

ք. Երևան, 0040, Աճառյան 1, հեռ. 060 69-10-00/203:

1.3. Խմբագրությունն իրավաբանական անձ չէ, և գործում է հիմնադրի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա:

1.4. Գիտական հանդեսը հրատարակվում է տարեկան երկու անգամ, հայերեն, առանձին նյութերով՝ օտար լեզուներով (ռուսերեն, անգլերեն), յուրաքանչյուրը մինչև 20 տպագրական մամուլ ծավալով, ք. Երևանում:

1.5. Գիտական հանդեսը կարող է ունենալ նույնանուն և նույն ծավալի հավելվածներ:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Հիմնադրի, գլխավոր խմբագրի, խմբագրական խորհրդի անդամների հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:

2.2. Գիտական հանդեսի Գլխավոր խմբագիրն ի պաշտոնե Ակադեմիայի ռեկտորն է:

2.3. Խմբագրության աշխատանքները ղեկավարում է գլխավոր խմբագիրը, իսկ նրա բացակայության դեպքում՝ գլխավոր խմբագրի տեղակալը: Խմբագրական խորհրդի տեղեկատվական գործընթացների տեխնիկական ապահովումն իրականացնում է քարտուղարը: Գլխավոր խմբագիրը, նրա տեղակալը և քարտուղարն ընտրվում են խմբագրական խորհրդի կողմից:

2.4. Գլխավոր խմբագիրն իրավունք ունի՝

- հրավիրել խմբագրության խորհուրդ և նախագահել խորհրդի նիստերում,
- որոշումներ կայացնել խմբագրության գործունեության ընթացիկ հարցերի վերաբերյալ, բացառությամբ Հիմնադրի և խմբագրական խորհրդի իրավասությանը վերաբերող հարցերի,
- խմբագրության անունից հանդես գալ առանց լիազորագրի,
- խմբագրության անունից վարել բանակցություններ, ստորագրել Գիտական հանդեսի խմբագրական խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերը,
- Հիմնադրին ներկայացնել առաջարկություններ խմբագրական խորհրդի կազմի և թվաքանակի վերաբերյալ:

2.5. Գլխավոր խմբագիրը պարտավոր է՝

- հսկողություն սահմանել խմբագրության արդյունավետ գործունեության ապահովման նկատմամբ, ելնելով այն խնդիրներից, որոնք նախատեսված են սույն կանոնադրությամբ,
- չհրապարակել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ,
- պահպանել «ՀՀ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահանջները,
- հոգ տանել մայրենի լեզվի անաղարտության համար:

2.6. Գիտական հանդեսի յուրաքանչյուր համար պարտադիր պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- ✓ հրատարակության անվանումը,
- ✓ հիմնադիրը,
- ✓ խմբագրական խորհուրդը,
- ✓ հրատարակիչը,
- ✓ տպաքանակը,
- ✓ խմբագրության, տպարանի, հրատարակչի հասցեն:

2.7. Գիտական հանդեսի տպագիր բոլոր համարները խմբագրությունը պետք է անվճար ուղարկի ՀՀ ազգային գրադարան, գրապալատ և ՀՀ արդարադատության նախարարություն:

2.8. Խմբագրական խորհրդի իրավունքները, պարտականությունները, գործելաձևը:

2.7.1. Խմբագրական խորհրդի իրավունքներն են՝

1) խմբագրության աշխատակարգի հաստատումը,
2) խմբագրության գլխավոր ուղղությունների և թեմաների որոշումը,
3) անհրաժեշտության դեպքում խմբագրական խորհրդի արտահերթ նիստերի հրավիրումը:

2.7.2. Խմբագրական խորհրդի պարտականություններն են՝

1) խմբագրություն ներկայացված բոլոր հոդվածների քննարկումը և Գիտական հանդեսի համապատասխան բաժիններում ներառումը,

2) չգրախոսված հոդվածների քննարկումը և դրանց հրատարակման համար համաձայնություն տալը:
3) Գիտական հանդեսի մշտական զարգացումն ապահովող հարցերի քննարկումը, որոշումների նախագծերի ընդունումը և ներկայացումը հիմնադրի հաստատմանը,
4) Գիտական հանդեսը որակյալ հոդվածներով հրատարակման ապահովումը:

2.7.3. Գիտական հանդեսի խմբագրական խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով: Խմբագրական խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե խմբագրական խորհրդի նիստին մասնակցում են խմբագրական խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսից ավելին, որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գիտական հանդեսի հիմնական նպատակն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում հիմնարար և կիրառական գիտությունների զարգացմանն օժանդակումն է, աղետների ռիսկի նվազեցման ու կառավարման ուղղությամբ նորագույն մեթոդների ու եղանակների ներդրումը, ինչպես նաև այդ բնագավառում մեթոդաբանական հիմնախնդիրների բացահատումն է ու դրանց լուծման գործընթացներին նպաստումը:

3.2. Գիտական հանդեսի հիմնական խնդիրներն են՝

- զարգացնել ճգնաժամեր առաջացնող վտանգների և վտանգավոր երևույթների ուսումնասիրման գործընթացը և նպաստել դրանց ուղղությամբ գիտական հետազոտություն-ների ակտիվացմանը.
- օժանդակել տարաբնույթ վտանգներից ու վտանգավոր երևույթներից տարածքների ու բնակչության խոցելիության նվազեցմանն ուղղված հետազոտությունների կատարմանն ու արդյունքների ներդրմանը.
- նպաստել հրշեջ-փրկարարական աշխատանքներում նոր տեխնոլոգիաների, տեխնիկական միջոցների, դրանց հա-մապատասխան հանգույցների մշակմանն ու ներդրմանը.
- նպաստել արտակարգ իրավիճակների կանխման և հե-տևանքների վերացման նոր տեխնոլոգիաների մշակմանը և ներդրմանը.
- նպաստել ճգնաժամային կառավարման գիտական ուղղու-թյունների զարգացմանը.
- օժանդակել արտակարգ իրավիճակներում օպերատիվ կառավարման գործընթացներում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանն ու գիտական զարգացմանը.
- զարգացնել ռիսկերի նվազեցմանն ուղղված մեթոդաբանու-թյունը.
- օժանդակել կրթական համակարգում աղետների ռիսկի նվազեցման ու կառավարման ուղղությամբ նորագույն մե-թոդների ու եղանակների ներդրմանն ու զարգացմանը և այլն:

4. ՀԻՄՆԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Հիմնադրի իրավունքներն են՝

- խմբագրական խորհրդի ներկայացմամբ հաստատել հոդվածներին ներկայացվող պահանջները,
- գլխավոր խմբագրի առաջարկությամբ ստեղծել և լուծարել Գիտական հանդեսի խմբագրական խորհուրդը,
- սահմանել Գիտական հանդեսի տպաքանակը,
- Գիտական հանդեսի հրատարակման համար օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագիր համապատասխան տպագրական կազմակերպության հետ:

4.2. Հիմնադրի պարտականություններն են՝

- Գիտական հանդեսի խմբագրական խորհրդում հանրապետության ճանաչված գիտնականների ու մասնագետների ներգրավումը,
- Գիտական հանդեսի գործունեությունն ապահովելու նպատակով խմբագրությանը համապատասխան աշխատանքային պայմաններով ապահովումը,
- Գիտական հանդեսը ՀՀ պետական կառավարման և տարածքային կառավարման մարմիններին, արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի ստորաբաժանումներին, հոդվածների հեղինակներին անվճար փոխանցումը,
- հրապարակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներով ապահովումը,
- Գիտական հանդեսի գովազդի կազմակերպումը:

5. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՅԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Խմբագրության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի սեփական միջոցների հաշվին:

6. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Խմբագրությունը ստեղծվում և լուծարվում է հիմնադրի գիտական խորհրդի որոշմամբ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ընդհանուր դրույթներ…… 3
2. Կազմակերպական կառուցվածքը…… 4
3. Հիմնական նպատակներն ու խնդիրները…… 7
4. Հիմնադրի իրավունքներն ու պարտականությունները…… 9
5. Խմբագրության ֆինանսական միջոցների գոյացման և օգտագործման կարգը…… 10
6. Խմբագրության ստեղծումն ու լուծարումը…… 10